

լանց հոգեղէն կեանքի էական տարրերը, նորանց, ազատ հոգիով սնուցանող սուրբ հաւատի հիմ- ները, Հայաստանութիւն, խաղաղասիրութիւն կար- ծես թէ Հայերի բնատուր յատկութիւններ էին դարձած. նորանք սիրած են եղել միշտ այն թա- րաւորութիւնը, որի հոգաբարձութեան և իշխա- նութեան ներքոյ են եղել գտնուած, առանց տըր- տընջման և դժգոհութեան նորանք վճարում էին այն ծանր հարկերը, որ դնում էին նորանց վերայ տիրապետող բարբարոս թագաւորները: Հայերը պատերազմական հոգի էին ստանում կրօնի վը- տանդի ենթարկման զիպուածում: Այս ասու- թիւններին զօրաւոր ցոյցը կամ հանդէսը ներկա- յացնում է մեզ հինգերորդ դարի այն ականաւոր պատերազմը, որի սրտաշարժ նկարագրութիւնը տեսնում ենք Եղիշէ վարդապետի պատմութեան մէջ: Ո՞վ չէ կարդացած արդեօք անմահ վարդա- պետի այս գրուածը, որտեղ գեղեցիկ կերպով երևում է Հայերի տիրասէր բնաւորութիւնը, գեր- օրինակ հաստատամտութիւնը աստուածատուր պատուիրանների մէջ և այն դառն չարարանքները, զորս կրած են խեղճ Հայերը անգութ բարբա- րոս տիրապետողից: Տեսէք ինչպէս է ասում Այրարատի Յովսէփ եպիսկոպոսը միւս Հայ եպիս- կոպոսների և քրեպիսկոպոսների բազմութեան հետ Պարսկական բռնաւոր Յաղկերտի համար. «Ի նախնեաց ունիմք սովորութիւն աստուածա- տուր պատուիրանաւ աղօթս առնել ի վերայ թագաւորի, և անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց զորա, զի խաղաղու- թեամբ վարեսցէ զտիեզերական իշխանութիւնդ, զոր աւանդեալ է դմա յԱստուծոյ, զի ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր ի հաւատոց մերոց զմեզ ոչ որ կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք: Ամենայն ինչք և ստաց- ուածք մեր ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան, ըստ կամաց քոց արա զինչ և կամիս . . . Մեր ոչ խախտեմք ի մերոյս հաւատոյ, վաղվա- ղակի արա ըստ կամեցողութեան քում: Ի քէն տանջանք, և ի մէնջ յանձնառութիւնք, սուր քո

և պարանոց մեր, և Հայկազն ընթերցող, չե՞ս մոմորմումարդեօք այդ սովորը կարդալիս. կարճ է այդ հատուածը. բայց որպիսի պայծառախայ- լութեամբ երևում է Հայերի խաղաղասէր բնա- ւորութիւնը, և այն պատերազմի պատճառը, որ ունեցան Հայերը Պարսկական հրապաշտ թագա- ւորի հետ: Յաղկերտ կամեցաւ քրիստոնէութիւնը ջնջել մի քաղաքական կարեւոր պատճառով՝ զըլ- խաւորապէս, Բաջ հասկանալով թէ Քրիստոնէ- ական կրօնը Հայերի միաւորիչ կապը լինելով Յոյների հետ, նա ստիպեց Հայերին ուրանալ քրիստոնէութեան հաւատը, և ընդունել կրա- պաշտական, սրանով կարելի էր Հայերին ան- ջատել Յոյներից և միաւորել Պարսկական ազգի հետ. դա էր քաղաքական նպատակը, որ պատ- ճառ եղաւ Հայերի դրութեան, նորանց ստաց- ուածների յափշտակութեան, և այլ բազմատե- սակ տառապանքների, որք վսեմ բանաստեղծութեամբ նկարագրուած են Եղիշեայ վարդապետի պատմական գրութեան մէջ

ՄԵԼԷԷԷԷԷ ՏԵՐ ԳՆԷԴԷԷԷ ԱԶԷԷԷԷ

1871ԷՐԷԷԷ - ԳԷԷԷԷԷԷ ԵՐ ՆԵՅԷԷԷԷԷԷ:

Հ Ա Յ Ո Յ Կ Ե Ա Ն Ք Ի Վ Ե Ր Ա Յ

ԹԻՒՐ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հայ ազգը իր ներքին կեանքի կողմից բաւական հետաքրքրելի լինելովը երբեմն շատ սքանչելի գրա- կանական երևոյթների պատճառ է լինում:

Այդպիսի երևոյթներից է վերջիններս լոյս ելած «Исторія войско и владичества русскихъ на Кавказѣ»)» անունով ռուսերէն գրուածքի Ա. հատորի Բրդ զիբբը, որի մէջ նրա հեղինակ Պ. Պուրրովինը նկարագրում է Վովկասեան ազգերի կեանքը, որոնց շարքում և Վովկասաբնակ Հայերինը:

Այս գրքի արժանաւորութիւնը գնահատելու և մանաւանդ Հայերի մասին հանդէս բերած տեղե-

*) Т. I. 3ч. Спб. 1871 г. II, 7 р. съ пер. 8 р.

կուծիները քննութեան տակ ձգելու համար հարկաւոր է առանձին շարադրութեան ու աւելի հրմուտ և ընդունակ գրիչների սպասել: Բայց առայժմ աւելորդ է հարեանցի կերպով ծանօթացնել մեր ընթերցասէր հասարակութեանը նրա մէջ հանդէս եկած հայկացիների և տեղեկութիւնների հետ Հայերի վերաբերութեամբ:

Թէպէտ Պ. Հեղինակը մի տեղում ասում է թէ «Հայերի բաղմնադիմի կենցաղն ուսումնասիրելը է մեր գործի նպատակը և մենք բաւականաւորում ենք այն ժողովրդի կեանքը կարծաւոր ուշադրութեամբ (caractériser), որը գտնուել է անդրկովկասեան խանութիւնների մէջ, բայց այս խոստովանութեամբ հետեւել է կարողացել: Որովհետեւ նախ՝ որ իր ասածները վերաբերում է բոլոր Հայերին, այլ ոչ Նրեանցուն կամ Շուշեցւոյն կամ Տիֆլիսեցւոյն և ըն և ըն և երկրորդ՝ որ թէպէտ կամեցել է կարծաւոր ուշադրութեամբ նահանգներում բնակող Հայերի կեանքը, բայց ոչ միայն այդ նպատակի հասնել է կարողացել, այլ հաղորդում է շատ թերի և կցկտոր տեղեկութիւնք: ուստի կարծում ենք որ այդ զբոսաւորը կարգացող օտարազգին ոչ մի ճշմարիտ և ամբողջ գաղափար ունենալ չ'պիտի կարողանայ գտնէ Վովկասարնակ Հայերի նկատմամբ:

Վովկասարնակ Հայերի կեանքը ուշադրութեամբ յանձն առնող Պ. Պատմաբանը այսպէս է խօսում մի տեղում «Հայր, ասում է, ընտանեկան կենցաղավարութեան մէջ ժլատ է և աւելի ժլատ է ուրիշների հետ ունեցած անձնական յարաբերութեանց մէջ. Հայից արծաթ փոխ առնել կարելի է, միայն մեծ տոկոսով և ապահով գրաւակաւում*): Ազգային բնաւորութեան (իրը թէ այս բոլոր Հայերի ընդամենն յատկութիւնն է) այդ յատկական պակասութիւնը քաւում է հասարակութեան օգտին և հասարակական և կրօնական հաս-

տատութիւնների համար արած զոհարելութիւններիով, Հայերն, ասում է, շատ ցերմեռանդութեամբ կապուած են վաճառականութեան և սեղանաւորութեան հետ: Նրանք շողորորով են և իրենց բարեկամութեան մէջ հաստատ չ'են (փոփոխական են), այն անձը որն աւելի պէտք է նրան՝ շուտով մոռացուում է: Հայերը, ասում է, պատմաբանը մի ուրիշ տեղում, մի քանի կրօնական արարողութիւնների մէջ պահպանել են մինչև ցայժմ կապաշտական ծէսերը. նրանք, ասում է, զոհ են բերում (մատաղ են անում) Միհրին և սրա համար տօն են կատարում կամ Տէր-Մարգարէի օրը կամ նրա նախատօնակ երեկոյին*), նմանապէս խոստովանում են Անահիտ չ'աստուածուհուն, և շատ Հայերի մէջ տարածուած է արեւապաշտութիւն, (407, 408, 409, և 410 երեսներում):

Հայի կենցաղավարութեանը փոքր ի շատէ ծանօթ և այս տողերը կարդացող անձը ան-

(*) Հայք ոչ մի ժամանակ և ոչ երբէք կրճահեն Միհրին (և Անահիտին) ինչպէս էր կապաշտութեան միջոցին. շատ մեծ սխալ է յիշնալ Հեղինակին այսպիսի կարծիքը և տեղեկութիւնքը, բայց սակայն աղքատաց և կարօտեցող կերակուր պատրաստելոյ սովորութիւն ունին՝ Տէր-Մարգարէի անուամբ, և Նկեղեցին առաջին զարեքն այսպիսի բարի սովորութիւն ունի՝ այսինքն գառն, ոչխար, հորթ և ըն բերել մի տեղ՝ ուր Հաւատացեալք կը ժողովուին այս է Նկեղեցին, և մատաղցոքը զննելով կերակուր կապտաւորեն և ամեն հաւատացեալք՝ մեծն և փոքրն՝ աղքատն և հարուստն՝ եկն և բնակն եղբայրաբար և հոգեւոր սիրով կը վայելն:

Տեառնընդառաջի երեկոյին ընդարձակ փողոցաց՝ հրապարակաց և եկեղեցեաց սրահից մէջ հօւր վտակը հնաւանդ սովորութիւնն է, որ Քրիստոսի Տեառն մերոյ — ըստ աւանդութեան — զիշեր ժամանակ ուղեւորելով ի Տաւր օտարեցող համար ջահեր վառելոյն նշանակ է, և ինչպէս մեր Հայոց Նկեղեցին բացարձակ կուսուցանէ ժողովրդական՝ Քրիստոսի որդւոյն Աստուծոյ յաշխարհ գալուստը իրրեւ հօւր մարքիչ ամենայն անտից և մոլութեանց, ուստի և զիշերային ժամերկութեան մէջ կընթեռնու արն Աւետարանը՝ զոր կը վարդապետէ Քրիստոս, «Հօւր եկի արկանելու եւ զվնշելու թէ արդէն իսկ բոլորեք, — Առկ թիւ 49 — Արեւմտ ի նշ յարաբերութիւն ունի Միհր կամ Անահիտ և կամ հրապաշտութիւն ընդ Քրիս-

(*) Եթէ յիշէ օտարազգի արծաթափոխատուներին, այն ժամանակ գուցէ, Հայերին խնկով մոմով փնտռէ պատմաբանը. ահաւասիկ Ռուսաստանի մայրաքաղաքներում արծաթափոխատու օտարազգիք մանեթին տասն կոպիկ շաճ են առնում եւ երբեմն աւել:

շուշտ զարմացած պիտի հարցնէ պարոն պատ-
մարանին թէ «Դու միայն կաս յերուսաղեմ»,
ո՞չ ապաքէն անծխաղիլի է Հայի սրտաբաց և
նախանձիլի հիւրասիրութիւնը, նրա տան մէջ
տեսնուած թէ՛ և շատ հասարակ բայց զրէ՛թէ
անհատնիլի լիութիւնն ու բաւականութիւնը, նը-
րա հասարակական գործերի մէջ վաստակած պատ-
կանքն, որ բնա՛ւ շողոքորթութեան և ապե-
րախտութեան նշան չ'է կարող լինիլ, նրա հոչա-
կուած հաւատարմութիւնն ու զրէ՛թէ անձնուէր
երախտագիտութիւնը, որոնք քոյ յիշածդ պակա-
սութեանց տէր մարդոց հետ գտնուել չ'են կարող
Ո՞չ ապաքէն նոյն իսկ առաքինական զոհաբերու-
թիւնը, որոնք յիշեալ տողերի մէջ Հայի պակա-
սութիւնքք քաւօղ են համարուած, նրա առատա-
ձեռնութեան և ընկերասիրութեան ցոյցերն են, այլ
ո՞չ նրա արծաթամուրտութեան և ժլատութեան,
Տեսնուե՞լ է արդե՛ք որ Հայր խոյս տուած լինի
երբն մն իր երախտաւորից և իրեն պարտաւորու-

տութի զի Հայաստանեայց Եկեղեցւոյ որդւոց միտ-
քէն անգամ անցած չէ այսպիսի հակաքրիստոնէ-
ական աւելորդապաշտութիւն, բայց դժբաղդաբար
օտար պատմաբաններէն մին կը հեղինակէ այս-
պիսի զրպարտութիւն՝ որ մեզ նորարուք է:

Հուր վառելոյ սովորութիւնն ունին Յոյնք ևս, զոր քան զմեզ առաւել հանդիսաւոր կրկատարեն Յօհաննու Արարպետի ծննդեան տօնի երկեռ յեան՝ մինչև անգամ ամենայն տան առաջ, և ամեն փողոց և ամեն հրապարակ շատ բոցեր արծակող նիւթեր կը վառեն, և մեծ տօն և հանդէս կը կատարեն: Նորա պատասխան կրպառճառեն կատարել այս հանդէսը ի պատիւ Յօհաննու Արարպետի՝ ըստ բանի Տեառն՝ «Նա էր Ճրագն՝ որ լուծեալ և ծագէր, և դուք կամեցարո՛ւք ցնծալ առ ժամանակ մի ի յոյս նորա, — Յովհ. ե. 35) —

Սակայն այս ինչ յայտնի և անտարակոյտ է, զի ի հետմն մեր ազաւ իշխանութիւն ունեցած ժա-
մանակ, միայն ի հրապարակս և ի փողոցս կրկա-
տարուէր այս հանդէսը, և նոր փետայք թափովք
և փողովք կըլլօսնուին, և աշխոյժ երիտասարդք
կրակի վրայէն կըցածկուաէին և կուրախանային
և հաւանական է, զի հալածման ժամանակներ
սատահած թշուառութեանց և գերութեանց՝ պան-
դխտութեանց և օտար աշխարհաց մէջ՝ երկիւղե-
սլաշարեալ՝ կարողացած են Նիկիեցւոյ սրահնե-
րում՝ միայն կատարել ապահովութեամբ:

Թիւն համարած չ'լինի՝ թէ՛ նրա պիտանի և թէ՛ անպէտք ժամանակ՝ ընծաներով կամ՝ առանց նը-
րանց ներկայանալ իր բարերարի դուռը, գովել
նրա գործը և նոյնպէս ջնրմեռանդութեամբ յար-
գել ու պատուել նրան ինչպէս և յառաջ։ Եւ
մի՞թէ մի երկու ասկերախոնքի օրինակը կարող է
խլել Հայից այն արժանաւորութիւնքը՝ և իրա-
ւունք տալ մի պատմաբանի ամբողջ ազգն այդ-
պէս համարելու։

Ինչ որ վերաբերում է Հայի կրօնին — անշուշտ
 թե՛ պ. պատմաբանին և թե՛ նոյն իսկ բոլոր աշ-
 խարհին յայտնի է, որ Հայերը՝ ամենաշերմեռանդ
 քրիստոնեաներից լինելով՝ բնաւ կռապաշտու-
 թեան անունն անգամ չեն յիշում. ո՛ր մնաց որ
 այժմ այս և այն Հաստուածին մատաղնիւր անեն
 կամ խոստովանին և կամ արեւ պաշտեն : Այս
 կարծիքները բոլորն էլ Հայերի շատ հին անցնալին
 են պատկանում և այժմու վերաբերութեամբ նը-
 բանք զխոյլին երազածին են և սխալ : Ո՛չ մի
 Հայ այժմն չէ խոստովանում Անահիտին և ո՛չ էլ
 տօնում է մի քանի հին կռապաշտական ա-
 րարողութիւններից մնացած յիշատակութիւն-
 քը *) :

Սխալ է նշելու, որ պ. Տեղինյանը կարծում է թէ, Հայերը շատ քերականորեն լեզուաբան են վաճառականությունների և սեղանադրությունների հետ: Այն ինչ՝ թողնենք միւս Հայերը, յայտնի է որ Աուկասեան Հայերից քաղաքաբանների մի մասը միայն վաճառականություններում է պարապում, իսկ մնացած մասը և այն էլ մեծագոյնը՝ առհասարակ արհեստագործություններում է պարապում և գեղերի Հայ ժողովուրդն էլ գլխաւորապէս հողագործություններ և այգեգանություններում է զբաղւած, այդ սեղանադրություններում կամ վաճառականություններում: Այս երեւում է Աուկասեան նահանգների տնտեսական միջակից, որը մշակույթ է և տեղական կարծուծություններ լցնում է յատկապէս Հայերի (և մասամբ Պարսիկների) ձեռքով:

(*) Կարծումս էմ ըրիստոնեայ ազգ այժմս իր հին տոներն ու շատումները չեն մեծարում այն կրօնական նշանակութեամբ ինչպէս ներկայացնումէ աբ պատմիր :

Այդ ընդհանուր տեղեկութիւններից զատ եթէ աչքի անցնենք պ. պատմաբանի հաղորդած մասնաւոր տեղեկութիւնքն ևս, շատ տեղ ափ ի բերան կղմայլինք փաստերի առասպելականութեան վերայ: Զորորինակ հէնց սկզբում Հայերի պարապմունքը նկարագրելիս այսպէս է պատմում. «Հայերն, ասում է, պարապում են երկրագործութեամբ և խաշնարածութեամբ (անասնապահութեամբ): Աղէփառարարացի (Գէփառ) և Ախլիայի փառաւորի քիւղէրում ցանում են բրինձ, մեղանում (հացնում) են դորոն և բաբալ, իսկ Ելիսաբեթացի (Գանձակի) փառաւոր պարապում են քիւղարարութեան խաշնարածութեամբ: Բոլոր երեք գաւառներում էլ պահում են ապրելու ճշմ., քաշում են օղի և շինում են զինի այն տեղերում, որ տեղ կայ խաղող հասցնելու միջոց:»

Առկասեան նահանգների Հայերը խաշնարածութեամբ չեն պարապում, ըստ որում այդ գործով յատկապէս պարապում են նրանց մէջ գրտնուող Բրդերն ու թարաքամէքը *): Աղեքսանդրապոլի գաւառում — ոչ բրինձ, ոչ բամբակ, և ոչ էլ տորոն է բուսնում և այն գաւառի այդ բաները դրսից բերուած բաներ են ու գրեթէ միսխալով ծախուող: (Ընդ հակառակը այն տեղի զխաւոր բերքը — ցորենը — մոռացուել է.) Այդ գաւառում ապրելու մի ճճու պահել անկարելի է թրթնիք չգտնուելու պատճառով: Այլցխայի գաւառում, որ տեղ թէպէտ տեղ տեղ տորոն և ապրելում պատահում են, բայց բամբակ և բրինձ այնու ամենայնիւ չկայ: Ելիսաբեթապոլ գաւառի Հայերը մեծ մասով այգեգործ են և երկրագործ:

Զարմանալի տեղեկութեանց կարգումն է, նաև հետեւեալը. «Հայը, ասում է պ. պատմաբանը, սուրբ Պատարագի ժամանակ իր զուխը չէ բաց անում, որովհետեւ, ասում է, Ասիայում զխարկ հանել և գերծած զլուխը մերկացնելը ամենամեծ անարգանքի նշան է, բայց սրա փոխարէն, ասում

է, եկեղեցի մտնելիս նրանք հանում են ոտնամանները:»

Հիանալի տեսարան կլինէր այդ տեսնել Տիխիսի, Շուշուայ, Երեւանի և այլ քաղաքների Հայոց եկեղեցիներում՝ սուրբ Պատարագի ժամանակ, բազմաթիւ Հայ քրիստոնեաներին փափախներով և այլ զանազան զխարկներով կանգնած, այն ժամանակ Հայերս էլ մասամբ կարող էինք մղկիթում ազօթողներ համարուել... բացառութիւնները *) պ. պատմաբանի համար յատուկ փաստեր են համարուել, որոնցով այդպէս գեղեցիկ նշանաբան է կովկասաբնակ Հայերի կենցաղը...

Այս և այսպիսի տեղեկութիւնները վերոյիշեալ գրքից (որ պատմութեան անուն է կրում) սպասել դժուար էր այդ. բանն այս է որ այս տեղեկութեանց պէս են զխաւորապէս շատ մի այլ և այլ տեղեկութիւնք Հայերի հարսանիքի և ամուսնութեան զանազան ծիսակատարութեան վերաբերութեամբ, որոնք այս տեղ թուելն աւելորդ է մանաւանդ որ պարոն հիդինակի աղբիւրները շատ կասկածաւոր են ճշգրտութեան և կատարելութեան կողմից:

Մի քանի տեղ այդ կերպ գատողութեանց շարքում անհետում են և բաւական ճիշդ նշանաբաններ, որոնք վերաբերում են Հայերի արժանաւորութեանց: Զորորինակ՝ Հայերն, ասում է, առ հասարակ հասկացող են և սիրով հետևում են լուսաւորուելու, վաճառականութեան և աղէփառարարութեան կողմից ախոյեաններ չունին. նրանք համբերող, հաշտադէտ և ժլատութեան աստիճանի չափաւոր են. շատ լաւ կարող են գուշակել, ո՞ր ձեռնարկութիւնն է օգտաւետ և ո՞րն անօգտաւ: Հայերն, ասում է, շատերի գատողութեամբ շատ խաղաղասէր ազգերի կարգիցն են. նրանց պակասութիւնքը միմիայն՝ նրա յաճախակի ճնշող բռնութեան դէմ պաշտպանուելու և մաքառելու:

(*) Հայը շատ հազիւ է հովուութիւն կամ խաշնարածութիւն անում. իսկ Հայերի խաշինքն ու հօտը արածեցնող եւ պահողները միշտ այդ վարժկաններն են: Հայ — չօպան չկայ:

(*) Գերմանացիք էլ կիրելի Ասիացիք են, որովհետեւ նկատուած է որ մի քանիսը նոյնպէս զուխները ծածկած են կանգնում իրենց եկեղեցում:

պատուղներն են: Բայրընը*) Հաւատացնում է՝ որ զգուար է գտնել մի ուրիշ այնպիսի աղզ, ինչպէս Հայերը, որ նրա ժամանակագրութեան (տարեգրութեան) էջերը այնպէս սակաւ եղծուած լինելին եղծնագործութիւններով: Հաղիւ թէ, ասում է պ. Հեղին. Հայերից զատ գտնուի աշխարհիս երեսին մի ուրիշ աղզ, որ այնպիսի հաստատամտութեամբ և միաբանութեամբ կրած լինի իր ուսերի վերայ քրիստոնէութեան լուծը և պաշտպանած լինի նրան մահմետականների բազմադիմի բռնակալութեան դէմ, Հայ կանանց համար ասում է որ նրանք ծոյլ են, դանդաղ են և ծանրաքայլ. բայց մի ուրիշ տեղում էլ ցոյց է տալիս որ նրանք (Հայ կանայք) բոլոր իրենց կեանքն անցնում են տնական և զաւակները կրթելու (մեծընեկու) հոգսերի մէջ, Առհասարակ պ. Հեղ. իր նկարագրութեան մէջ հաստատում է, որ Հայ կանայք շատ ջրմետանդ են դէպ ի իրենց մարդիկ և շատ սրտացաւ ու հաւատարիմ գործակից են նրանց համար:

Ահաւասիկ այս խօսքերով՝ որոնք մի և նոյն գրչից են արձանացել յիշեալ գրքում, լիովին հերքում են վերեւում գրած տեղեկութիւնքը, և յիշեալ պատմութիւնը կարգացող օտարազգին պիտի մոլորուած մնայ այդ խառն ու կցիտուր տեղեկութեանց մէջ. մէկ՝ պիտի Հայերին կիսավայրենի և կռապաշտ կենցաղավարութեան մէջ խորասուզուած ժողովուրդ համարէ. մէկ՝ քրիստոնութեան հաւատարիմ պաշտպան ու լուսաւոր յառաջադիմութեան ձգտող և ըն. Իսկ պ. պատմաբանն էլ ի հարկէ արդէն քաջահաւատ է որ իր գործը շատ բարեխղճութեամբ կատարած է և երբ և իցէ իր պատմութեան անխալ շաւիղներով ջանախնդիր օտարազգի լեզուները կդիմեն Աղեքսանդրապոլ կամ Ախլայայ՝ որ թէ այն տեղերի բամբակից և ապրելումից, կամ տորոնից ու բրնձից իրենք էլ մի փոքր օգուտ տեսնեն, և թէ կիսակռապաշտ ու կիսավայրենի ժողովրդին լոյս ու փրկութիւն մատուցանեն... Աստուած բարի վայելում տայ այդպիսի փառքին...:

Ուշադրութեան արժանի է նաև, որ յիշեալ գրքի մէջ բաւական ընդարձակ և բազմակողմանի կերպով նկարագրուած է կովկասեան միւս ալցերի՝ Վրացոց, Լեռնականների և Թաթարների կեանքը. բայց Հայերինը համեմատաբար շատ կցկտուր և թեթեւ է նկարագրուած: Թէպէտ իրաւունք չունինք պ. Հեղինակին մեր քմբին համաձայն շարժեցնել, բայց շատ զարմանում ենք, որ իր պատմութեան նիւթին աւելի համապատասխանօղ և յիշեալ աղբերից աւելի հին և յառաջագէմ ազգի վերաբերութեամբ այդպիսի անվայել թեթեւութեամբ և թիւր կարծիքներով է հանդէս գալիս, առանց յիշելու թէ նրա հասարակական բազմադիմի բարեմասնութեանց և բարեկարգութեանց և թէ նրա եկեղեցւոյ նշանակութեան վերայ, թէ և միւս աղբերի նկարագրութեան մէջ եղածի չափ այդ հարցերի վերայ խօսած է: Բաւական է յիշել որ Հայերի վերայ խօսածը բովանդակում է ընդամենը 22 եր. (400) ից մինչև 422 ն):

Ահա սիրելի ընթերցող, այսպիսի մի սքանչելի երեւոյթ էր Պ. Իւրրովինի պատմութիւնը, որն անշուշտ օտարազգի ընթերցասէր հասարակութեան ձեռքը իրրեւ արժանահաւատ աղբիւր պէտք է համարուի ուրիշների շարքում: Հայերի մասին ևս տեղեկութիւն ունենալու համար Ծաւալին այս է՝ որ Հայերն շատ սակաւ են գրում իրենց հայրենեաց նկարագրութիւնը, իրենց իսկ ողջամիտ հայրենացքներով և օրինաւոր ճշտութեամբ, որպէս զի օտար ազգի բանասէրները այդ հարազատ աղբիւրներից կարողանան քաղել իրենց տեղեկութիւնը, և այդպիսի վայրիվերոյ գրուածքներով օտարներին նախապաշարմունքի տեղիք չտան մեր սիրելի ազգի մասին, որն առ այժմս զգալիորաբար վերոյգրեալ տողերով ու տեղեկութիւններով է նշան-

Ապրիլ:

(*) Անդղիտցի հուշակաւոր բանաստեղծ: